ՀԱՅԿ ՀԱՐՈՅԱՆ

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ /ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ/ ՊԱՏՄԱԿԱՆ ԴԵՐԻ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Հարցը կարևորվում է ազգային և կրոնական արժեքների փոխհարաբերության, ազգային - պետական մտածելակերպի զարգացման, դեմոկրատական վերափոխումների համատեքստում կրոնի ու եկեղեցու դերի վերարժևորման առումով: Հայաստանի պատմության և հայ մշակույթի զարգացման գործում Հայ առաքելական եկեղեցու(այսուհետ՝ Հայ եկեղեցի) և քրիստոնեության կատարած դերի արժևորումը բազմատեսանկյուն, բարդ և նուրբ հարց է: Բազմատեսանկյուն է, որովհետև պահանջում է կրոնագիտական, մշակութաբանական, ազգագիտական, էթնոհոգեբանական համատեղ մոտեցում: Բարդ է, քանզի ենթադրում է ոչ միայն հայ եկեղեցու և քրիստոնեության, Հայաստանի ու հայ մշակույթի պատմության, այլև հասարակական զարգացման օրենքների, ազգային հոգեբանության առանձնահատկությունների լավագույն իմացություն: Հարցը միաժամանակ նաև նուրբ է, որքանով որ առնչվում է ազգային մտախառնվածքի հետ: Հայ իրականության մեջ խնդրո առարկայի շուրջ ձևավորվել են երկու միմյանց հակադիր տեսակետներ. մեկը ազգային գիտակցության մեջ տիրապետող *կրոնաեկեղեցական/ջատագովական/ մոտեցումն է*, մյուսը՝ *պատմագիտական կամ կրոնագիտականը:* Համաձայն *կրոնաեկեղեցական (ջատագովական) տեսակետի* քրիստոնեության ընդունումը բացարձակապես դրական նշանակություն է ունեցել հայ ժողովրդի համար, քանզի շնորհիվ քրիստոնեության հայը ապրեց հոգևոր-բարոյական առաջընթաց, առնչվելով քրիստոնեության մեջ պարունակվող մարդասիրական ու համամարդկային արժեքներին, անցում կատարեց բարբարոսությունից դեպի քաղաքակրթություն, ունեցավ մտավոր զարթոնք, ստեղծեց բարձրարժեք մշակութային գործեր և դասվեց քաղաքակիրթ ազգերի շարքին: Քրիստոնեական կրոնով, ասում էր կաթողիկոս Վազգեն Առաջինը, հայ ժողովուրդը «Միավորվեցավ ու մարմին առավ իբրև ազգ, իբրև հոգեբանություն, իբրև գիտակցություն և դարձավ մշակույթ ստեղծող ժողովուրդ: Հայ կյանքը ստացավ նպատակ, գոյության իմաստ: Եվ այդ ճանապարհին վրա, քրիստոնեական հավատքի լույսին ներքև, կազմավորվեցավ հայ ժողովուրդի հանճարը և բարոյականը, որ ծնունդ տվավ հոգևոր-մշակութա-

յին արժեքներու։ Նույն այդ քրիստոնեական ոգին կազմավորեց նաև հայ ժողովուրդի հավաքական գիտակցությունը, հայրենիքի գիտակցությունը։ Սկիզբ առավ ճշմարիտ ու հարազատ հայոց ազգային պատմությունը» (3, 82)։ Արժևորելով միջնադարյան հայ մշակույթի զարգացման գործում քրիստոնեության ունեցած դերը, նա գտնում էր, որ միջնադարյան հայ մշակույթն ամբողջապես ճարտարապետություն, գրականություն, երաժշտություն, պատմագրություն, շաղախված է քրիստոնեական լույսով և արդյունք է քրիստոնեական գաղափարների և «Կարելի չէ հայ ժողովրդի կյանքը, հույզերը, ապրումները, ինչպես նաև հայ ժողովրդի մշակույթը բաժանել քրիստոնեական լույսեն ու արժեքներեն» (նույն տեղը, 75)։ Եկեղեցական պատմագրությունը, նույնացնելով հայ ժողովրդի ու հայ եկեղեցու պատմությունները, այն միտքն է զարգացնում, թե անհնար է տարանջատել ազգայինն ու կրոնաեկեղեցականը միմյանցից առանց վնասելու դրանց ամբողջությանը։ «Մեր մեջ, հակառակ ամեն ճիգի, անհնար է առանձնավորել ազգային պատմությունը եկեղեցականեն. մին թեզանն է, մյուսը առեջ։ Երկուքին իրարմե անջատումը կոչնչացնե երկուքն ալ» (3, 1998, Ե,15),- ասում է հայ աստվածաբան Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանը։ Ավելին, քրիստոնեության ընդունումից հետո հայ ժողովրդի պատմությունը եկեղեցու պատմությունն է, «Հանենք Հայ Եկեղեցին կամ բազմաչարչրկվող «տերտերներեին» մեր պատմության էջերից, և այնտեղ անգոյությունից, անդիմությունից բացի այլ բան չենք տեսնի», - կարդում ենք «Էջմիածին» ամսագրում (3,1980, Ը,12)։ Ի վերջո, այսօր շեշտվող գաղափարները, քարոզում էր Գարեգին Ա կաթողիկոսը, «ազգային միասնություն, ազգապահպանություն, ազգային մտածողության ձևավորում, Հայրենիքի հզորություն, Հայ Դատի պայքար և այլն, դարերի փորձով հիմնավորված և արմատավորված են Հայ Եկեղեցում» (Նույն տեղը, 8-9)։ Ըստ *գիտապատմական տեսակետի* խնդրո առարկան ենթակա չէ միանշանակ զուտ դրական կամ զուտ բացասական արժևորման և պահանջում է համակողմանի՝ կրոնագիտական, ազգաբանական, մշակութաբանական, պատմագիտական, հոգեբանական վերլուծություն(Մանրամասն տես, 6)։ Անշուշտ, հայ եկեղեցին որպես ազգային եկեղեցի, նրա պատմությունը որպես հայ ժողովրդի պատմության անբաժանելի մաս, անցել է պատմական փորձությունների միջով, բաժանել հայ ժողովրդի ճակատագիրը, նրա տառապանքը, վիշտը, զրկանքներն ու ուրախությունները։ Անհերքելի իրողություն է, որ պատմական երկարատև ժամանակահատվածներում հոգևոր-մշակութային, գիտակրթական ոլորտներում հայ ժողովրդի ծեռքբերումները, ստեղծված արժեքները սերտորեն կապված են եկեղեցու և եկեղեցական գործիչների անունների հետ։

Հայ եկեղեցու (քրիստոնեության) պատմական դերը արժևորելիս դեռևս 19-րդ դ. ազգային-դեմոկրատական մտավորականության ներկայացուցիչները այն սահմանափակել են կայացման ու գոյության առաջին շրջանով, երբ նա նպաստել է գրերի գյուտին, մշակույթի զարգացմանը, զարկ տվել կրթությանն ու դաստիարակությանը: Ժամանակի ընթացքում, ըստ հայ դեմոկրատների, եկեղեցին դրական որակները կորցրել և փոխարկվել է ժողովրդին հարստահարող, երեխա կնքող, մեռել թաղող կազմակերպություն: Հակադրվելով «քրիստոնեությունն է հայ ժողովրդին փրկել» տեսակետին Ռաֆֆին գրում է. դա ասվում է «մի հոյակապ ազգի վերաբերությամբ, որի ողորմելի փշրանքներն են մնացել այսօր... Ինչ՞ու կորան դրանք, ինչ՞ու կրոնը չկարողացավ պահպանել: Եթե հայերն ունեցել են փառավոր անցյալ, դա եղել է նրա հեթանոսական դարերում, և քրիստոնեությունն ընդունելուց հետո այդ ազգը սկսեց տկարանալ և քայքայվել»: Ռաֆֆու այս տեսակետը պաշտպանում էին նաև Մ.Նալբանդյանը, Հ.Սվաճյանը, Մ.Մամուրյանը: Լեոն, սփյուռքահայ գործիչներ Լ.Մարտիրոսյանը, Հ.Պողոսյանը և այլք, գտնում են, որ քրիստոնեության պաշտոնականացումը չարդարացրեց ազգային պետականության ամրապնդման հետ կապված հույսերը: Այսպես, սփյուռքահայ մտածող Հ.Ասատրյանը նշում է, որ քրիստոնեության ընդունումով հայը ցանկացել է քաղաքական խնդիրներ լուծել, քաղաքականապես ինքնուրույն դառնալ, անջրպետ ստեղծել Հռոմի և Պարսկաստանի կրոնամշակութային և հոգևոր-բարոյական ընբռնումների միջև: Բայց «Տրդատը և Գրիգորը ճակատագրական սխալ թույլ տվեցին,- գրում է նա,- անտեսելով քրիստոնեության աշխարհաքաղաքացիական բնույթը: Հենց այդ հատկանիշի շնորհիվ սկզբից նեթ Հայոց պատմությունը դրվեց առեղծվածային մի շրջանի մեջ և ծնունդ տվեց մեր ազգային կյանքի ընթացքը դրոշմող ողբերգական մի շղթայակցության: Այդ ողբերգությունը... պայմանաւորուում է ազգայնականի եւ աշխարհաքաղաքացիականի աններդաշնակութեամբ եւ հակամարտութեամբ, նախ հայ հոգում, եւ ապա հենց դրա հետեւանքով պատմութեան մարզում» (1, 56): Հարաբերականորեն ընդունելի պետք է համարել այն տեսակետը, որ Հայ եկեղեցին հայապաշտպանությանը նպաստել է միայն ազգայնացումից հետո 5-9-րդ դ.դ., երբ արդեն Հայոց պետականությունը վերացել էր, և նա, ակամա կատարելով կրոնական հաստատությանը ոչ բնորոշ աշխարհիկ-պետական, կրթական-մշակութային գործառույթներ և որդեգրելով հակաքաղկեդոնական դիրքորոշում, աստիճանաբար ստանձնում է նաև ազգային հավաքական շահերի արտահայտչի ու պաշտպանի դերը: Պետականության բացակայության պայմաններում Հայ եկեղեցին այլևս դադարում է զուտ կրոնական հաստատություն լինելուց և հայ մարդու կողմից ընկալվում է իբրև ազգային հաստատություն,

ազգային ինքնության պահպանման միջոց, որի արդյունքում էլ ազգային գիտակցության մեջ տեղի է ունենում հայ ժողովուրդ, հայ մշակույթ և հայ եկեղեցի հասկացությունների համադրում ու նույնիսկ նույնացում: Հոգեբանական այդ հիմքի վրա էլ Հայ եկեղեցին վեհացվել ու իդեալականացվել է, ընկալվել ոչ այնքան որպես կրոնական, որքան ազգային-էթնիկական կառույց: Հայ եկեղեցու պատմական դերի արժևորումը նոր լույսի ներքո է ներկայացվում արդի հայ պատմագիտական ուսումնասիրություններում: Այսպես, օրինակ, համընդգրկուն և մանրակրկիտ վերլուծության ենթարկելով խնդրո առարկա հարցը պատմաբան Հ.Դավթյանը առանձնացնում է Հայ եկեղեցու բացասական դերի մի շարք տեսանկյուններ. Հայկական քաղաքակրթությունը ոչնչացնելու, Հայոց պետականության կործանմանը նպաստելու, իր բնօրրանից հայ ժողովրդի արտագաղթ սկզբնավորելու, հայոց զորականության վախճանի պատճառ դառնալու, ազգային ոգին տկարացնելու, հայոց պետականությունը վերականգնելու գաղափարը խեղդելու և գիտակցաբար հայկական պետականությանը փոխարինելու գործելակերպի մեջ (Տես 2): Այդ ամենի արդյունքում չէ՞ որ մեզանում պետականության գաղափարը, պետական մտածելակերպը աստիճանաբար իր տեղը զիջել է կրոնաեկեղեցական մտածելակերպին, իսկ գոյատևումն էլ դարձել է կենսածև: Սոցիալ-հոգեբանական այդ բարդույթի հաղթահարումը, այն է՝ ազգային հոգեբանության և մտածելակերպի մեջ տիրապետող կրոնաեկեղեցական արժեքային համակարգի փոխարինումը ազգային-պետական մտածելակերպով պետականության զարգացման անհրաժեշտ նախադրյալ է:

Գիտապատմական տեսակետի կողմնակիցները, բացասաբար արժևորելով հայ եկեղեցու՝ իբրև քրիստոնեական հաստատության դերը Հայաստանի պատմության մեջ, ամենից առաջ, ընդգծել են դրա քաղաքական-գաղափարական մեծ վնասը: Մասնավորապես, Գ.Նժդեհը գտնում է, որ Հայ եկեղեցին, սխալ ըմբռնելով քրիստոնեական սիրո խորհուրդը, դարեր շարունակ պատճառ է դարձել «մեր ժողովրդի անօրինակ ողբերգութեան», սպանել է «մեր ժողովրդի կամքը». «Սխալւել, չաչաչար սխալւել է մեր եկեղեցին «տնանկ»ների եւ «սնանկ»ների բարոյականութիւն քարոզելով» (8, 74): Սփյուռքահայ գործիչներ Մ.Սերոբյանը, Հ.Պողոսյանը գտնում են, որ սխալ հասկացված ու թյուր մեկնաբանություններ ստացած քրիստոնեական սկզբունքները հայ ժողովրդի ստրկամտության պատճառ են դարձել, վերածվել հայի ռազմական ոգին ջլատող ազդակի: Այսպես, ըստ Հ.Պողոսյանի, քրիստոնեություն ընդունելով հայը մտքով հունացավ, հոգով հրեացավ, լեզվով և մշակույթով բաժանվեց և դարձավ արևելքից արևմուտք (տես՝ 11): Պատմաբան Լեոն 1878-1915թ.թ. ողբերգական

իրադարձությունների պատճառներից մեկը համարում է «կղերական դիվանագիտությունը», այն է՝ հայ հոգևորականության որդեգրած սխալ քաղաքական կողմնորոշումը (Տես 4): Իսկ Վ.Տերյանը գտնում էր, որ հաճախ եկեղեցին կաստայական իր շահերը ներկայացրել է որպես համազգային շահեր: Ավելի իրատեսական է Ա. Չոպանյանի գնահատականը. նա պահանջում է հայ կղերական դասի ներկայացուցիչների հանդեպ ցուցաբերել տարբերակված մոտեցում, այն է՝ առանձնացնել ստրկամիտ եկեղեցական առաջնորդներին ազգանվեր եկեղեցականներից (10, 695): Այն, որ հայ ժողովրդի գոյապահպանման գործում մեծ դեր է ունեցել հայ եկեղեցին, անուրանալի է: Վիճահարույց է ոչ թե առանձին հոգևորականների կամ ընդհանրապես եկեղեցու որպես ազգային կառույցի ծավալած ազգանպաստ կամ ոչ ազգանպաստ գործունեությունը, այլ քրիստոնեական գաղափարախոսության, հայ եկեղեցու իբրև կրոնական հաստատության կատարած դերը: Մշակույթի, գիտության զարգացմանը հայ եկեղեցականները, հոգևորականները նպաստել են ոչ թե իրենց պաշտոնով, այլ գործունեությամբ ու մտածելակերպով: Եվ հայ ժողովուրդն էլ գոյատևել է ոչ թե շնորհիվ եկեղեցու կամ քրիստոնեության, այլ իր կենսունակության:

Այնուհետև, պատմական իրականությանը չի համապատասխանում եկեղեցական պատմագրության այն պնդումը, թե շնորհիվ քրիստոնեության հայ ժողովուրդը ունեցավ գիր ու գրականություն, ստեղծեց մշակութային իր ոսկեդարը: Հայոց գրերի և դպրության ստեղծումը ամենից առաջ պայմանավորված էր ազգային քաղաքական խնդիրները լուծելու հրամայականով, այլ ոչ թե միայն ազգային լեզվով քրիստոնեական գրականություն ունենալու կամ մայրենի լեզվով այն քարոզելու անհրաժեշտությամբ: Միանգամայն ճիշտ է այն տեսակետը, որ «ազգային ինքնագիտակցության արթնացման և դիմադրություն կազմակերպելու քաղաքական միտումները ծնեցին ազգային գիր և ազգային-քրիստոնեական գրականություն» (7, 78): Գրերի գյուտը ազգային մեծ նվաճում էր, որը հնարավոր եղավ համազգային շահի խոր գիտակցման հիման վրա աշխարհիկ-պետական, հոգևոր-կրոնական իշխանությունների և հայ մտավորական-գիտնականի համագործակցության արդյունքում: Այսպիսով, գրերի գյուտը պատմության թելադրանքն էր, ժամանակի հրամայականը, որից հետևում է, որ ոչ թե քրիստոնեությունը պատճառ դարձավ գրերի ստեղծման համար, այլ ազգային-քաղաքական շահերի գիտակցումը, որը և հիմք հանդիսացավ տասնամյակներ շարունակվող թագավոր-կաթողիկոս (պետություն-եկեղեցի) հակամարտության վերացման ու նրանց համագործակցության համար: Քրիստոնեության ընդունումը և քարոզչությունը ընդամենը արտաքին այն շարժառիթը եղավ, որ

արագացրեց գրերի գյուտը և հնարավոր դարձրեց աշխարհիկ և հոգևոր իշխանությունների համագործակցությունը:

Իսկ ինչ վերաբերում է միաչքրիստոնեական Հայաստանում հայերեն գրավոր լեզվի գոյության-չգոյության չարչրկված հարցին, ապա որոշ հայ լեզվաբաններ, այդ թվում և Հր.Աճառյանը այդ բացառում էին: Մյուսները, օրինակ, Ա.Աբրահամյան, է.Աղայան և այլք, իրավացիորեն գտնում էին, որ եթե հայերը նախքան Մեսրոպ Մաշտոցը չունենային գիր, չէին ունենա նաև հարուստ բառապաշարով մշակված լեզու: Դրա պերճախոս ու անհերքելի ապացույցը գրերի գյուտից անմիջապես հետո 5-րդ դարում տեղի ունեցած մտավոր թռիչքն էր, մշակութային զարթոնքը: Անհնար է, որ նոր-նոր այբուբեն ու գրավոր լեզու ստեղծող ժողովուրդը ունենա մտավոր աննախադեպ թռիչք և ընդամենը մի քանի տասնամյակների ընթացքում կերտեր մշակութային իր Ոսկեդարը: Ավելին, դժվար է պատկերացնել, որ իբրև Արամազդի օգնական գրի ու գրչության Տիր աստված ունեցող ժողովուրդը չունենար սեփական գրությունը: Ըստ Գ.Ջահուկյանի՝ դեռևս Ք.ա 3-րդ հազարամյակի սկզբներին հայերենը, անջատվելով հնդեվրոպական մայր լեզվից (արիական/հարիական/ լեզվից- Հ.Հ.), դարձել էր ինքնուրույն լեզու: Հիրավի, վաղնջական ժամանակներից ի վեր արարչագործության կենտրոն, անմահների երկիր, «սուրբ օրինաց երկիր», աստվածների ժողովատեղի համարվող Հայաստանը անցել է հոգևոր հասունացման, լեզվամտածողության զարգացման անհրաժեշտ բոլոր փուլերը՝ պատկերագրություն, գաղափարագրություն, նշանագրություն, հնչյունագրություն:

Հետաքրքիր մի տեղեկություն է հաղորդում նաև պատմահայր Մ.Խորենացին: Նա գրում է. Բարդածան Եղեսացին /2-րդ դ. երկրորդ կեսի պատմագիր և գնոստիկական ուսմունքի հետևորդ/, որը «պատմության մեջ չստեց, որովհետև հզոր էր խոսքով, «շատ բան է գրել ...մեր երկրի կուռքերի պաշտամունքի մասին», «...մեր կողմերն եկավ, հուսալով թե կկարողանա հետևորդներ գտնել վայրենի հեթանոսներիս մեջ, բայց երբ ընդունելություն չգտավ, մտավ նա Անի ամրոցը, կարդաց մեհենական գրականությունը, որի մեջ նաև թագավորների գործերը, նա իր կողմից ավելացրեց իր ժամանակի անցքերը, բոլորը փոխադրեց ասորի լեզվի և ապա նրանից հունարենի»(5, 225-226): Հարց. ի՞նչ լեզվով է գրված եղել բնագիրը: Եթե Բարդածան Եղեսացու կարդացած մեհենական գրականությունը գրված լիներ մեկ այլ օտար լեզվով, ապա Պատմահայրը կնշեր նաև այդ լեզուն, որից կատարվել են փոխադրությունները: Մնում է ենթադրել, որ բնագրի լեզուն եղել է հայերեն...Պատմական վավերաթղթերը վկայում են, որ նախապատմական ժամանակաշրջաններում Հայաստանը եղել է բարձր զարգացած մշակույթի ու քաղաքակրթության կենտ-

րոն: Աստվածաշնչում տեղ գտած Եդեմի պարտեզի, օձի, ջրհեղեղի ու Նոյյան տապանի, Արարատյան լեռների և Հայաստան աշխարհի կրկին վերածնվելու պատմությունները պարզապես արձագանքներն են Հին Հայաստանում գոյություն ունեցող քաղաքակրթության, որի մասին մենք քիչ բան գիտենք, իսկ աշխարհը դրանք անգիտությամբ(՞) շարունակում է վերագրել հրեա ժողովրդին: Այսպես, Բերոսոսի(ք.ա. 4-3-րդ դ.դ.) «Բաբելոնիկա» եռահատոր աշխատության մեջ ջրհեղեղի բաբելոնյան պատմության մեջ ասվում է, որ նավը գնում է «Աստվածների» մոտ, հանգչում Հայաստանում գտնվող լեռան վրա: Փրկվածներին աստվածները «անմահություն են շնորհում», որտեղից էլ «անմահների երկիր» անվանումը, որը տրվել է Հայաստանին: Պատմական իրողություն է նաև նախաքրիստոնեական Հայաստանում բարձր զարգացած մշակույթի, քաղաքակրթական արժեքների, մասնավորապես, ժամանակի գիտության(աստղագիտության) պահանջներին համապատասխան մշակված տոմարագիտության գոյությունը: Դժվար է համաձայնվել միջնադարյան հայ մշակույթը ամբողջապես քրիստոնեական-կրոնական որակելու հայ եկեղեցականների տեսակետին նույնպես: Նախ՝ քրիստոնեական(կրոնական) մշակույթի՝ որպես այդպիսի իրողության գոյության մասին պնդումը ճիշտ չէ, որովհետև պատմականորեն կրոնը ինքը հանդես է գալիս իբրև հոգևոր-մշակութային արժեքների կարևորագույն տարր: Կրոնը մշակույթ չի ստեղծում, քանզի ինքը մշակութային զարգացման արդյունք է ու մշակույթի տարրերից մեկը՝ ի թիվս բարոյականի, գիտականի, արվեստի, փիլիսոփայության, բանահյուսության ևն: Կրոնը կարող է ազդել մշակույթի ձևավորման, զարգացման վրա դրսևորման առումով: Քննելով արվեստի փիլիսոփայությանն առնչվող հարցերը Ֆ.Շելլինգը, մասնավորապես, գրում է. «...արվեստը դա արվեստ է. այն իր բնույթով ի սկզբանէ աշխարհիկ է և հեթանոսական, և դրա համար էլ այն քրիստոնեության մեջ որոնում է ոչ թե մասնավոր բովանդակություն, այլ այն համընդհանուրը, որը նրան կապում է հեթանոսության հետ» (12, 364): Եվ հետո. փորձել հայ ժողովրդի քաղաքակրթական զարգացման ժամանակաշրջանը հաշվարկել քրիստոնեության ընդունումից, նշանակում է աղավաղել պատմական իրողությունները, աղճատել Հայաստանի մշակութային, հոգևոր և մտավոր զարգացման իրական ընթացքը: Հայ ժողովուրդը իր պատմության տարբեր փուլերում ստեղծել է մշակութային արժեքներ, որոնք իրենց արտահայտչամիջոցներով տվյալ դարաշրջանի ծնունդն են, իսկ բովանդակությամբ, էությամբ՝ հայ ժողովրդի ազգային ոգու օրինաչափ դրսևորումները: Օրինակ մինչքրիստոնեական Հայաստանում հայը կառուցել է հեթանոսական տաճարներ, բագիններ, քրիստոնեական շրջանում՝ եկեղեցիներ, վանքեր, կերտել խաչքարեր:

Անժխտելի իրողություն է, որ միջնադարի հայ մշակույթի երախտավորները գերազանցապես եղել են կրոնավորներ, հայ մշակույթի և հոգևոր արժեքների ստեղծման գործում լուրջ ներդրումներ են ունեցել հարյուրավոր հայ եկեղեցականներ ու հոգևորականներ: Սակայն նրանք մշակույթի և գիտության զարգացմանը նպաստել են ոչ թե իրենց պաշտոնով, ոչ որպես կրոնական կամ եկեղեցական գործիչներ, այլ իրենց ազգանպաստ, հասարակական-քաղաքական, մշակութաստեղծ գործունեությամբ ու մտածելակերպով: Այսպես, օրինակ, Ներսես Մեծը նշանավոր է հայոց մեջ բարքերը քաղաքակրթելու, պետության անկախությանը նվիրված լինելու, Մեսրոպ Մաշտոցն ու կաթողիկոս Սահակ Պարթևը՝ գրերի ստեղծման սխրանքով, Եղիշեն ազատագրական պայքարի գաղափարախոսությամբ, Մ. Խորենացին՝ հայ պատմագրության սկզբնավորմամբ, Գր. Նարեկացին՝ «Մատեան ողբերգության» փիլիսոփայական-աստվածաբանական հանճարեղ պոեմով, Հովհաննես Իմաստասերը/Սարկավագ՝ փիլիսոփայական-տոմարագիտական իր ուսումնասիրություններով, կաթողիկոս Ն. Շնորհալին՝ ոչ միայն իր շարականներով, այլև աշխարհիկ բնույթի մի շարք ստեղծագործություններով: Բազմաթիվ հոգևորականներ նշանավոր են նախ և առաջ իրենց մշակութաստեղծ, հայրենասիրական-ազգային գործունեությամբ, ազգային-ազատագրական պայքարին ունեցած մասնակցությամբ: Դժվար է գերագնահատել միջնադարյան կրթօջախների՝ դպրեվանքերի, վարդապետարանների (Սանահին - Հաղպատ, Անիի Կարմիր վանք, Կտուց վանք ևն), համալսարանների (Տաթևի, Գլաձորի), նոր ու նորագույն ժամանակներում էջմիածնի Գևորգյան ճեմարանի, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի և բազմաթիվ այլ կրթարանների դերը ազգային արժեքների ստեղծման, զարգացման ու ազգային ոգու պահպանման գործում: Սակայն ազգային-մշակութաստեղծ այդ գործունեությունը ամենևին էլ չի բխել եկեղեցու կամ եկեղեցական գործչի՝ որպես կրոնական հաստատության բնույթից կամ կրոնավոր լինելու հանգամանքից, այլ արդյունք է եկեղեցու՝ ազգային-մշակութային հաստատության վերածվելու իրողության և հայ եկեղեցականի՝ ազգային արժեքները զարգացնելու մտահոգությամբ: Մյուս կողմից միջնադարյան հայ մշակույթն էլ միասեռ չի եղել, տիրապետող կրոնական ձևի մեջ դրսևորվող մշակույթին զուգահեռ, իսկ հաճախ էլ որպես դրան հակոտնյա գոյություն է ունեցել ու զարգացել է աշխարհիկ հայ ավատատիրական վերնախավի ու ժողովրդի կողմից ստեղծված մշակույթը, ժողովրդական բանահյուսությունը: Աշխարհիկ մշակույթի դրսևորումներ են Դավիթ Անհաղթի, Անանիա Շիրակացու, Գր. Մագիստրոսի գիտական ողջ ժառանգությունը, Վ. Բաբունու, Գր. Տաթևացու, Հովհ. Որոտնեցու, Հովհ. Պլուզ Երզնկացու, Հովհ. Իմաստասեր սարկավագի և միջնադարի մյուս հայ նշանա-

վոր մտածողների աշխարհիկ-փիլիսոփայական բնույթի գործերը: Վերջապես աշխարհիկ բնույթի են հայ ժողովրդական բանահյուսության գլուխգործոց «Սասնա ծռեր» էպոսը և միջնադարում ստեղծված բազմաթիվ վիպերգերն ու երգերը: Հայ միջնադարյան մշակույթի անբաժանելի մասն են կազմում և մշակութային մեծ արժեքներ են միջնադարի մտածողներ Մ. Գոշի, Վ. Այգեկցու, Ստ. Դաշտեցու, Հովհ. Երզնկացու կողմից ստեղծված գեղարվեստական և գիտական ստեղծագործությունները, Մ.Հերացու, Ա. Ամասիացու բժշկագիտական աշխատությունները: Ավելին, նույնիսկ հայ միջնադարյան մշակույթի նշանավոր ժողովածուները «Վարք սրբոց», «Վարք հարանց», «Ճառընտիր», «Հայսմավուրք», զուտ կրոնական համարել ճիշտ չի լինի, քանզի նրանցում պարունակվում են նաև գեղարվեստական ինքնուրույն և թարգմանական բնույթի արձակ նյութեր:

Այսպիսով, Հայաստանի ու նրա մշակույթի պատմության մեջ Հայ եկեղեցու կատարած ոչ միանշանակ դերը, վերջին հաշվով, պայմանավորված է եղել հայ ժողովրդի կենսագործունեության յուրահատկություններով, այն է՝ պատմա-քաղաքական բարդ ու հակասական իրադրությամբ: Եվ Հայ եկեղեցու դրական դերը միանշանակորեն պետք է ածանցել ու բխեցնել ոչ թե նրա որպես զուտ կրոնական հաստատության էությունից, այլ պատմաքաղաքական այն պայմաններից, որոնք նրան վերածել են էթնոմշակութային հաստատության և օժտել կրոնական կազմակերպությանը ոչ բնորոշ մշակութաստեղծ, աշխարհիկ-պետական այլ գործառույթներով:

Գրականություն

1. Ասատրեան Հ. Արքնացիր, հայ մարդ, Եր., 1988:
2. Դավթյան Հ. Մեզ անծանոթ Վարդանանց պատերազմը, Եր., 2007:
3. «Էջմիածին»:
4. Լեո, Անցյալից, Եր., 2009:
5. Խորենացի Մ. Պատմություն Հայոց, Եր., 1965:
6. Հարության Հ. Հայ եկեղեցին որպես էթնոմշակությանին կառույց և ազգային միասնության խորհրդանշան: Միջազգային գիտաժողովի նյութեր, Եր., 2006:
7. Սարտիրոսյան Ա. Մաշտոց, Եր., 1982:
8. Նժդեհ Գ. Բաց նամակներ հայ մտաւորականութեան, Երևան, 1998:
9. Վազգեն Ա Հայրապետ Հայոց, գիրք Բ,1959:
10. Չոպանյան Ա. Երկեր, Եր., 1988:
11. Պողոսյան Հ. Ներածություն հայ հոգեբանության, Գահիրէ, 1958:
12. Шеллинг Ф. В. Й. Сочинение в 2—х томах.: Т. 2. М., 1989.